# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

2023թ. սեպտեմբերի 29 ի N 390 - Ա

ք. Աշտարակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-ի N-178-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5–րդ հոդվածի 3-րդ մասով, 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1066-Ն որոշման 1-ի կետի 2-րդ ենթակետով հաստատված հավելվածի դրույթները՝

**որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի տարածքում գյուղատնտեսական բարձրարժեք հողատեսքերն ավելի ցածրարժեք հողատեսքի փոխադրման գործընթացի կազմակերպման նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Արագածոտնի մարզպետի 2016թ-ի հոկտեմբերի 11-ի թիվ 178-Ա կարգադրությունը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Восстановимая подпись

VERIFIED OCSP 9/29/2023 11:02:17 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզպետի 2023թ
սեպտեմբերի 29 N 390-Ա որոշման

**ԿԱԶՄ**

ՀՀ կառավարության 17.09.2009թ.-ի թիվ 1066 որոշման 2-րդ հավելվածի համաձայն գյուղատնտեսական բարձրարժեք հողատեսքերն ավելի ցածրարժեք հողատեսքերի փոփոխման մարզային հանձնաժողովի

1. **Սերգեյ Մովսիսյան** --- ՀՀ Արագածոտնի մարզպետ, հանձնաժողովի նախագահ
2. **Յուրիկ Ազատյան** - ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ
3. **Անդրանիկ Միրզոյան** - ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի հողաշինության բաժնի պետ
4. **Արշակ Գրիգորյան** - «Արագածոտն» ՋՕ ընկերության իրացման բաժնի պետ (համաձայնությամբ)
5. **Վաչագան Դավթյան** - ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ (համաձայնությամբ)
6. **Աշոտ Սուքիասյան** - Շրջակա միջավայրի նախարարության հողերի և ընդերքի քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ (համաձայնությամբ)
7. **Ջուլետա Թադևոսյան** - Կադաստրի կոմիտեի գեոմատիկայի կենտրոնի դաշտային աշխատանքների կազմակերպման և համակարգման բաժնի գլխավոր մասնագետ (համաձայնությամբ)
8. **Համապատասխան համայնքի ղեկավարները** (համաձայնությամբ)
9. **Համապատասխան համայնքի մասնագետներ** (համաձայնությամբ)

ՀՀ Արագածոտնի մարզպետի
աշխատակազմի գլխավոր քարտուղար՝

Восстановимая подпись

X

ՀՐԱՉՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN HRACHYA 2014650144 Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ